ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ - 21/02/06

Ք. Երևան

«18» Փետրվար 2021թ.

«Մակինյան իրավաբանական գրասենյակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման համար 96.110.1152563, ՀՎՀՀ՝ 06960293, հասցե՝ ՀՀ, Լոռի, Ալավերդի, Թումանյան փ. 10/1), այսուհետ՝ «Կատարող» ի դեմս նրա տնօրեն Լիլիթ Մակինյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման համար 273.120.03023, ՀՎՀՀ՝ 01540062, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ.Հովսեփյան 26) այսուհետ՝ Պատվիրատու, մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝

* Մեդիա ակադեմիայի ստեղծման հետ կապված խորհրդատվության տրամադրում
* Պայմանագրերի և դրանց նախագծերի կազմում և բանակցում
*Ունկնդիրների և դասավանդողների հետ իրավահարբերությունների կարգավորման մեխանիզմների մշակում,
* Վարչական վարույթների մասնակցություն
* Միջազգային պայմանագրերով խորհրդատվության տրամադրում
* Նոր նախագծերի կազմում
* Այլ իրավաբանական բնույթի ծառայություններ, կողմերի համաձայնությամբ (այդ թվում նաև բանավոր):

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու գործունեությանը

2.1.2. Կատարողից պահանջել, որպեսզի ծառայությունները մատուցվեն համաձայն Պայմանագրի

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները մատուցել անձամբ, իր աշխատակիցներից որևէ մեկի միջոցով:

2.2.2. Միակողմանի հրաժարվել պայմանագրի կատարումից Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.3. կետում նշված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար

2.2.3. Պատվիրատուից պահանջել տարածք վերջինիս գրասենյակում՝ աշխատանքները կատարելու համար՝ անհրաժեշտության դեպքում:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Կատարողի պահանջով տրամադրել ծառայությունների մատուցման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

2.3.2. Պայմանագրով նշված Պարտավորությունները կատարել բարեխղճորեն, սահմանված ժամկետներում և կարգով, իսկ դրանց բացակայության դեպքում համաձայն Օրենսդրության և գործարար շրջանառության սովորույթների

2.3.3. Ժամանակին կատարել պայմանագրով նախատեսված վճարումները:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ծառայությունները մատուցել համաձայն պայմանագրի, մատուցման ընթացում ղեկավարվելով Օրենսդրությամբ, գործարար շրջանառության սովորույթներով

2.4.2. Ծառայությունների մատուցման ընթացքում և դրանից հետո երրորդ անձանց չտրամադրել տեղեկություններ Պատվիրատուին մատուցված ծառայությունների վերաբերյալ առանց վերջինիս համաձայնությամբ

2.4.3. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

3. Ծառայությունների հանձնում-ընդունումը, Արժեքը և վճարման կարգը

3.1 Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների հանձնում-ընդունումն արձանագրվում է Կողմերի միջև ամսական հիմքով ստորագրվող կատարողական ակտերով (այսուհետ՝ Կատարողական ակտ):

3.2 Եթե որևէ օրացույցային ամսվա ընթացքում սույն Պայմանագրի շրջանակներում Ծառայություններ չեն մատուցվում, ապա տվյալ ժամանակաշրջանի համար Կատարողական ակտ չի ստորագրվում:

3.3 Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն սահմանում է հայտնաբերված թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, որը պարտադիր է Կատարողի համար:

3.4 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Ծառայություններն ընդունելուց և միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Ծառայություններում հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք բացառում են մատուցված Ծառայությունների արդյունքի օգտագործումը նախատեսված նպատակով և չեն կարող վերացվել ողջամիտ ժամկետում: Ընդ որում, սույն կետով նախատեսված դեպքում Պատվիրատուն չի վճարի փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց, իսկ Կատարողը պարտավոր կլինի վճարել տուգանք՝ Ծառայությունների մատուցման ընդհանուր ամսական արժեքի 20 (քսան) տոկոսի չափով:

3.5 Ծառայությունների վճարման գինը կազմում 525.000 /հինգ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ /այսուհետ՝ Պայմանագրի գին/ ներառյալ բոլոր հարկերը, որից 18.02.2021թ.-28.02.2021թ. ծառայությունների մատուցման համար վճարման ենթակա գումարի չափը կազմում է 206 250 ՀՀ դրամ/ներառյալ հարկերը, իսկ 01.03.2021-31.12.2021թթ. ծառայությունների մատուցման համար ամսական՝ 31 875 ՀՀ դրամ /ներառյալ հարկերը/:

3.6 Պատվիրատուի կողմից Կատարողին ծառայությունների գինը վճարում է անկանխիկ՝ Կատարողի Ակբա Բանկ ԲԲԸ 220323334205000 հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.7 Պատվիրատուն Պայմանագրի գինը վճարում է յուրաքանչյուր ամսվա համար Կատարողի կողմից համապատասխան հաշիվ ապրանքագիր ներկայացնելուց և Կատարողական ակտի երկկողմանի ստորագրվելուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով, իսկ 18.02.2021թ.-28.02.2021թ. մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Կատարողական ակտի երկկողմանի ստորագրվելուց 50 (հիսուն) աշխատանքային օրվա ընթացքում: Հաշիվը ներկայացվում է հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը:

3.8 Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.9 Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 3.7 կետում նշված վճարման կարգը Պատվիրատուի կողմից խախտելու համար Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ պայմանագրի արժեքի 0,13 տոկոսի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի լուծումն իրականացվում է դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները, կամ լրացուցիչ համաձայնագրերը դրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

7.3.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Մակինյան իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26	Հասցե՝ ՀՀ, Լոռի, ք.Ալավերդի, Թումանյան փ. 10/1,
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ ՀՎՀՀ՝ 06960293
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000	Հ/Հ՝ 220323334205000
Հովհաննես Մովսիսյան	Լիլիթ Մակինյան
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*